

## Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### **Արցախի Հանրապետությունում 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման հանրապետական հանձնաժողովի 2019 թվականի մայիսի 17-ի նիստի**

Մասնակցում էին՝ հանձնաժողովի 34 անդամներից՝ 33-ը:

Բացակայում էր՝ ԱՀ ազգային անվտանգության տնօրենի առաջին տեղակալը

#### **Օրակարգում ներառված էին հետևյալ հարցերը.**

1. Արցախի Հանրապետությունում 2020 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման անհրաժեշտությունը, էությունը, վիճակագրական բնույթը և կազմակերպչական հարցերը:
2. Արցախի Հանրապետությունում 2020 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվին հավանություն տալու մասին հարցը:
3. Այլ հարցեր:

**Բացման խոսքով** հանդես եկավ նիստը նախագահող՝ ԱՀ 2020թ. գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման և անցկացման հանրապետական հանձնաժողովի նախագահ, ԱՀ պետական նախարար՝ **պարոն Գ. Մարտիրոսյանը**: Նա ողջունեց հանձնաժողովի անդամներին անդրանիկ նիստի կապակցությամբ և առաջարկեց հաստատել ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից նախապես ներկայացված օրակարգը: Գ. Մարտիրոսյանը նշեց, որ դեռևս 2010թ. ԱՀ Ազգային ժողովն ընդունել է «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ԼՂՀ օրենքը, որով կարգավորվել են երկրի տնտեսության համար չափազանց կարևոր աշխատանքների կազմակերպման և անցկացման հարաբերությունները: Ս. թ. ապրիլի 19-ին ԱՀ կառավարությունը ընդունել է «Արցախի Հանրապետությունում 2020 թվականին գյուղատնտեսական համատարած հաշվառում, 2019 թվականին փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառում անցկացնելու և 2020 թվականին անցկացվելիք գյուղատնտեսական համատարած հաշվառման հանրապետական, Ստեփանակերտ քաղաքի և շրջանային հանձնաժողովների կազմերը հաստատելու մասին» N276-Ն և «Արցախի հանրապետության 2020 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման ծրագիրը(հարցաշարը) հաստատելու մասին» N277-Ն որոշումները: Նշված իրավական ակտերի համաձայն 2020թ. հոկտեմբերի 11-31-ը ԱՀ-ում նախատեսվում է իրականացնել գյուղատնտեսական համատարած հաշվառում, որին կնախորդի ընթացիկ տարվա հոկտեմբերի 11-31-ը Ասկերանի, Նորագյուղի և Հերիերի համայնքներում փորձնական գյուղատնտեսական համատարած հաշվառումը: Այդ նպատակով էլ ձևավորվել են

հանրապետական, Ստեփանակերտ քաղաքի և շրջանային հանձնաժողովներ: Այնուհետև հրապարակեց ԱՀ կառավարության որոշումներով ամրագրված հանձնարարականները:

Հանձնաժողովի նախագահին ընդգծեց գյուղատնտեսության կարևորությունը, ռազմավարական մեծ նշանակությունը ԱՀ-ում՝ բերելով մի շարք ցուցանիշներ. ճյուղում ստեղծված նոր արժեքի մասնաբաժինը վերջին 10 տարիներին ՀՆԱ-ում կազմել է միջին հաշվով 13 տոկոս, այստեղ զբաղված են ընդհանուր զբաղվածների 31,4 տոկոսը: <Գյուղատնտեսության դերը մեծ է երկրի պարենային անվտանգության ապահովման, գյուղի զարգացման և, ընդհանրապես, տնտեսության այլ ճյուղերի, մարդկանց բարեկեցության վրա ունեցած մուլտիպլիկատիվ էֆեկտով պայմանավորված: Բոլորիդ հայտնի է նաև այս ճյուղում հաշվառման հետ կապված դժվարությունները, առկա խնդիրները: Ի դեպ այս իրավիճակն է ամբողջ աշխարհում, այդ պատճառով ՄԱԿ-ը իր անդամ երկրներին պարտավորեցրել է առնվազն 10 տարին մեկ անգամ անցկացնել ԳՀՀ: Սա ԱՀ-ում նախատեսվող առաջին համատարած հաշվառումն է, ՀՀ-ում այն կազմակերպվել է 2014 թվականին:», - եզրափակեց իր խոսքը հանձնաժողովի նախագահը:

Առաջին հարցը ներկայացնելու համար նա խոսքը փոխանցեց հանձնաժողովի նախագահի տեղակալ, ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ տիկին Մ. Մինասյանին:

**Մ. Մինասյան** - Նա շնորհակալություն հայտնեց հանձնաժողովի նախագահին և անդամներին մասնակցության և հարցը կարևորելու համար: Ներկայացրեց Արցախի Հանրապետությունում 2020 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման անհրաժեշտությունը, էությունը, վիճակագրական բնույթը և կազմակերպչական հարցերը: Մ. Մինասյանը նշեց, որ գյուղատնտեսական համատարած հաշվառումը ազգային վիճակագրական համակարգի հիմնասյուներից է, մի շարք զարգացող երկրներում այն գյուղացիական տնտեսությունների կառուցվածքի ու աշխատանքի կարևոր այլ ասպեկտների մասին վիճակագրական տեղեկության ստացման եզակի աղբյուրն է: Ավելին, այն տվյալների հավաքագրման միակ գործիքն է, որը տեղեկություն է տալիս ամենաստորին աշխարհագրական մակարդակի տնտեսությունների մասին, որոնք, ըստ էության, պետական քաղաքականության մշակման և ներդրումային ծրագրեր իրականացնող անձանց համար չափազանց կարևոր են:

Համաձայն գործող միջազգային մեթոդաբանության, գյուղատնտեսական համատարած հաշվառումն իրենից ներկայացնում է առ հաշվառման պահը

գյուղատնտեսության կառուցվածքի վերաբերյալ համընդգրկուն տվյալների՝ գյուղատնտեսական նշանակության հողերի, անասնազխաքանակի, գյուղատնտեսական տեխնիկայի և գյուղատնտեսական նշանակության շենքերի և շինությունների, առկա ներուժի (մարդկային, նյութական) և դրանց օգտագործման վերաբերյալ տվյալների հավաքագրման, մշակման և տարածման վիճակագրական գործառույթ:

Արցախի Հանրապետությունում ԳՀՀ իրականացման կարևորությունը պայմանավորված է նաև նրանով, որ գյուղատնտեսությունը հանդիսանում է տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը, որտեղ գործող գյուղացիական տնտեսությունների (գյուղաբնակ տնային տնտեսությունների) քանակը կազմում է մոտ 17 հազար (նրանց բաժին է ընկնում գյուղատնտեսության համախառն արտադրանքի մոտ 80-90%-ը) և որոնց բնութագրական է.

- փոքր չափերը
- ներտնտեսային հաշվառման բացակայությունը
- ապրանքայնության ցածր մակարդակը (արտադրանքի 45%-ը սեփական սպառմանն է միտված, 20%-ը՝ բնամթերային վճարումներին և փոխանակումներին և, միջինը միայն 35%-ն է դրամայնացվում)
- մասնագիտացման ցածր աստիճանը
- ներդրումների և եկամուտների փոքր, սահմանափակ չափերը
- տնտեսական ակտիվության և գործունեության ներօլորտային փոփոխականության (այդ թվում՝ սեզոնային) բարձր աստիճանը և այլն:

Գյուղատնտեսական համատարած հաշվառման իրականացումը Արցախի Հանրապետությունում հնարավորություն կընձեռի ձևավորել գյուղատնտեսության վերաբերյալ վիճակագրական տվյալների ամբողջական համակարգ, գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների վիճակագրական ռեգիստրներ, կատարելագործել ընտրանքային վիճակագրական գործիքները, ապահովել դրանց համադրելիությունը գործող միջազգային չափանիշներին ու չափորոշիչներին և բացահայտել տարիների ընթացքում գյուղատնտեսության ենթակառուցվածքների փոփոխությունների միտումները: Գյուղատնտեսական համատարած հաշվառումը հնարավորություն կընձեռի ձևավորելու ոչ միայն միջազգայնորեն համադրելի առավել դեզագրեզացված ցուցանիշներով բնութագրվող գյուղատնտեսության պատկեր Հայաստանում, այլև կհստակեցնի

գյուղատնտեսության, որպես ձեռնարկատիրության (տնտեսական գործունեության տեսակի) առավել մանրամասնեցված կազմն ու կառուցվածքը, ինչի հենքով հնարավոր կլինի մշակել 17 հազար գյուղատնտեսությամբ զբաղվող տնային տնտեսությունների համար հաշվառման հիմք հանդիսացող կազմակերպա-իրավական նոր և գործունակ ձևեր:

Մ. Մինասյանը նշեց նաև, որ 2019թ. փետրվար-մայիս ամիսներին ստուգվել է համայնքների գրքերի վարման գործընթացը, ինչը սկզբնական վիճակագրական հաշվառման նպատակով չափազանց կարևոր է: Շրջվարչակազմերի ղեկավարների ուղղորդմամբ, ԱՎԾ տարածքային բաժինների կազմակերպմամբ, 7 շրջաններից 6-ում կայացել են հանդիպումները: Աշխատանքը հաջողվել է Ասկերանի, Մարտունու, Շուշիի և Շահումյանի շրջաններում, որտեղ ԱՎԾ աշխատանքային խումբը անհատական աշխատանք է տարել բոլոր համայնքների ներկայացուցիչների հետ, արձանագրելով որոշ թերություններ և սահմանելով դրանց վերացման ժամկետներ: Մարտակերտի շրջանի 42 համայնքից հանդիպմանը ներկայացել էր 26-ը, հաշվառման դրվածքը բավարար չէ: Քաշաթաղի շրջանի հարավային թևի 33 համայնքից գրքեր ներկայացրել են ընդամենը 4 համայնք, այն դեպքում, երբ ԱՎԾ շրջանային բաժինը բոլորին անհատապես տեղեկացրել է, կատարվելիք աշխատանքի մասին: Հաղորդում հանդիպումը նախատեսված է մայիսի 20-ին: Վերահսկողական աշխատանքին զուգահեռ, բոլոր համայնքներին ցուցաբերվել է մեթոդական աջակցություն:

Մ. Մինասյանը նշեց, որ հանրապետության տարածքն ըստ տեղեկությունների հավաքագրման պատասխանատու ատյանների սուբորդինացիայի բաժանվել է 5 հարթության, որոնց միջոցով կիրականացվեն ԳՀՀ տեղեկատվության հավաքագրումը և ամփոփումը՝ I) հաշվային, II) հրահանգչական, III) ԳՀՀ տեղամասային, IV) ԱՀ ԱՎԾ աշխատակազմի շրջանային բաժիններ V) ԱՀ ԱՎԾ ԳՀՀ վարչություն: Նա ընդգծեց, որ այս գործառույթում հիմնական դերակատարները պետք է լինեն հաշվարարները, որոնց հավաքագրման գործընթացում ակնկալվելու է համայնքների ղեկավարների աջակցությունն առ այն, որ նրանք որպես հաշվարարների թեկնածուներ ներկայացնեն համայնքի բնակիչներից, հատկապես կարևոր է, որ թեկնածուները լինեն մանկավարժներ, բժիշկներ և համայնքներում բնակչության կողմից հարգանք վայելող անձինք:

ԱՎԾ նախագահը կարևորեց մի հանգամանք ևս. կատարվող աշխատանքների առավելագույն որակ ստանալու համար պետք է գյուղացիական տնտեսություններին և այլ

հարցվողներին պատշաճ ձևով երաշխիքներ տրվեն առ այն, որ հավաքագրվող բոլոր տեղեկությունները վիճակագրական գաղտնիք են հանդիսանում և որևէ մեկի կողմից չի կարող օգտագործվել առանց անվանագերծման, անգամ դատական, դատաքննչական և այլ մարմինները որպես ապացույց Գյուղատնտեսական հաշվառման սկզբնական (անհատական) նյութերը(այդ թվում՝ տվյալները) չեն կարող օգտագործել: Մկզբնական վիճակագրական տեղեկությունների գաղտնիության պահպանման սկզբունքն ամրագրված է «Պետական վիճակագրության մասին» և «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ԱՀ օրենքներում մասնավորապես՝ «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ԼՂՀ օրենքի 8-րդ հոդվածում: Իսկ նշված օրենքների դրույթների հիմքում դրված է ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքներից և «Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքով» սահմանված սկզբունքներից՝ գաղտնիության պահպանման սկզբունքը, համաձայն որի վիճակագիրները պարտավորված են չիրապարակել ու չտարածել վիճակագրական գաղտնիք համարվող սկզբնական՝ անվանական բնույթի վիճակագրական տեղեկությունները: Սա, իհարկե, չի ենթադրում, որ ԳՀՀ արդյունքում հավաքագրված վիճակագրական տվյալներն չեն ամփոփվելու համայնքային, շրջանային և հանրապետական ագրեգացիայի մակարդակներով, ինչից ելնելով, ամփոփ տվյալների տրամադրումը համայնքների ղեկավարներին, շրջվարչակազմերին հնարավոր է:

**Գ. Մարտիրոսյանը** օրակարգի երկրորդ հարցը ներկայացնելու համար խոսքը փոխանցեց համապետական հանձնաժողովի նախագահի տեղակալ, ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ տիկին Մ. Մինասյանին:

**Մ. Մինասյան** – ԱՀ-ում ԳՀՀ-ն նախատեսվում է իրականացնել 2019-2021թթ. ընթացքում, ՀՀ-ում իրականացվածից մեկ տարով քիչ ժամանակահատվածում: 2019թ. փորձնական ԳՀՀ-ի համար ընթացիկ տարվա բյուջեով նախատեսված է 15232.7 հազ. դրամ:

Ծրագրի ընդհանուր արժեքի՝ շուրջ 270.2 մլն դրամի առյուծի բաժինը՝ 223.5 մլն դրամը կամ 82.7 տոկոսը բաժին է ընկնում 2020թ: 2021թ. կընթանան հիմնականում տվյալների մշակման, ամփոփման, արխիվացման ու հրապարակման աշխատանքներ, որի համար առաջարկվում է նախատեսել 31.4 մլն. դրամ: Համեմատության համար նշվեց, որ ՀՀ-ում 2014թ. այդ ծրագիրն արժեցել է 1 մլրդ 840մլն ՀՀ դրամ:

Հաշվի առնելով մասնագիտական և գործառական ուղղվածությունը նախահաշվի նախագիծը մանրամասն փորձաքննվել է ԱՀ ֆինանսների նախարարության կողմից:

Ասվեց, որ ներկայացված տարբերակից կրճատվել է 60315.0 հազար դրամ, կամ շուրջ 22.3 տոկոսը: Կրճատումների մեծ մասը վերաբերվում էր ժամանակավոր աշխատողների վերջնահաշվարկներին, ընդհուպ մինչև 10 ամսով աշխատանքի ներգրավվածների, տպագրության ծախսերին, որտեղ խնդիրը հիմնական հարցաթերթերի գունավոր տպագրությունն էր: Հանվել են գովազդային բնույթի աշխատանքների զգալի մասը, կապի, հաշվիչների հետ կապված այլ ծախսեր: Սա, իհարկե, չի ենթադրում, որ հընթացս տնտեսումներ չի արվելու: Ընդհանուր ծախսերի առավել մեծ մասնաբաժինը նախատեսված է ԳՀՀ աշխատանքներին ժամանակավոր ներգրավվելիք աշխատողների (հաշվարարներ, հրահանգիչ-հսկիչներ, ԳՀՀ տեղամասի վարիչներ, համակարգողներ և այլն) աշխատանքի վարձատրության համար՝ 2020թ նախահաշվի շուրջ 68%-ը: Մ. Մինասյանը խնդրեց վարչակազմերի ղեկավարներին շրջանային հանձնաժողովների նիստերին հատուկ ուշադրություն դարձնել անձնակազմի ընտրության հարցերին, հատկապես կարևորվեց հաշվարարների ընտրությունը, որովհետև նրանք պետք է ընտրվեն համայնքներից, հանդիսանում են տեղեկատվության հավաքագրման սկզբնաղբյուր և աշխատելու են 1 ամիս ժամկետով: Քանի որ ծրագրի իրականացումը ենթադրում է նաև մեքենաների մեծ քանակ, դրանք նախատեսվում են վարձակալել՝ համապատասխան փոխհատուցման ծախսերի տրամադրմամբ, 1 ամիս ժամկետով:

Մ. Մինասյանը նշեց, որ նախահաշվով գումարներ չեն նախատեսվել ժամանակավոր աշխատողների տեղակայման և աշխատանքի պայմաններ ստեղծելու համար, ենթադրվում է, որ մարդահամարի նման այս հարցերը /աշխատասենյակ, հեռախոս, կահույք, էլեկտրաէներգիայի և ջեռուցման ծախսեր և այլն/ պետք է տեղերում հոգան Ստեփանակերտի քաղաքապետարանը և շրջվարչակազմերը:

Աշխատանքները ճիշտ և ժամանակին կազմակերպելու համար Մ. Մինասյանը խնդրեց, որպեսզի որոշ պետական կառույցներ հնարավորինս սեղմ ժամկետում ԱՀ ԱՎԾ-ին տրամադրեն հետևյալ տեղեկատվությունը.

ԱՀ Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչությունից մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը.

- ըստ համայնքների հողային հաշվեկշիռները
- համայնքների ներսում հողերի սեփականության վկայական

ունեցողների ցուցակները,

- հողակադաստրային գրքեր ունեցող համայնքների ցանկը:

ԱՀ գյուղատնտեսության նախարարությունից՝ այգեգործական միության անդամների ցուցակն ըստ համայնքների:

ԱՀ Ստեփանակերտի քաղաքապետարանից ու շրջվարչակազմերից.

- օժանդակություն համայնքների միջոցով այգեգործական անդամներին տրամադրված և սեփականության իրավունքով պատկանող հողերի վերաբերյալ տեղեկատվության, այդ թվում ո՞ր համայնքներում են դրանք տեղաբաշխված, ստացման կապակցությամբ,

Համայնքներից շրջվարչակազմերի աջակցությամբ.

- համայնքներում մշտապես, ժամանակավոր հաշվառված տնտեսությունների քանակի վերաբերյալ,
- համայնքում չհաշվառված (բնակվող) տնտեսությունների քանակի վերաբերյալ.
- գյուղատնտեսական նշանակության շենք և շինությունների մասին տեղեկություններ:

## **Նիստը նախագահողի առաջարկությամբ զեկուցողին ուղղվեցին հարցեր.**

**Վ. Առստամյան** (ՊՆ ներկայացուցիչ)-Հարցս վերաբերվում է զորամասերում հաշվառման գործընթացի կազմակերպմանը:

**Մ. Մինասյան** – ԱՀ կառավարության 2019թ. ապրիլի 19-ի N276-Ն որոշմամբ հարցի մանրամասները տեղ կգտնեն ՊՆ և ԱՎԾ համատեղ հաստատված փաստաթղթում:

**Գ. Մարտիրոսյան** – Եթե հարցաթերթը հաստատված չէ, հնարավո՞ր է հարցաշարում փոփոխություն, ավելացում կամ կրճատումներ կատարել: Առաջարկում եմ դրանք նախապես ծանոթացնել հանձնաժողովի անդամներին:

**Մ. Մինասյան**– Հարցաթերթերը և դրանց լրացման հրահանգները օրենսդրությամբ նախատեսված է հաստատել ԱՀ ՎՊԽ կողմից: Քանի որ տվյալների մշակման ծրագիրը ծախսատար գործընթաց է, մենք հակված ենք այն ստանալ ՀՀ մեր գործընկերներից, իսկ սա ենթադրում է, որ մենք պետք է առաջնորդվենք ՀՀ-ում արդեն փորձարկված և միջազգային փորձագետների հավանությանն արժանացած հարցաթերթերով: Ցանկացած փոփոխություն իրականացնելուց հետո համապատասխանաբար փոփոխության կրեթի մուտքագրման, ամփոփման և տրամաբանական ստուգման ծրագրերում, ինչը կապված է նոր ծախսերի հետ:

Մենք հարցաթերթերի տարբերակները անպայման կուղարկենք հանձնաժողովի անդամներին և Ձեզ կներկայացվի առաջարկությունների ամփոփագիրը:

**Հ. Ղահրամանյան-** Հարցաթերթում փոփոխություններ կատարելու առաջարկությունները թերևս ճիշտ է փորձական ԳՀՀ-ից հետո ներկայացնել:

**Ա. Սարգսյան** -ԳՀՀ արդյունքների ամփոփումից հետո կատարվելու են արդյոք գիտական ուսումնասիրություններ համատարած հաշվառման արդյունքների հիման վրա:

**Մ. Մինասյան** -ԳՀՀ արդյունքները 2021թ. կմշակվեն, կամփոփվեն և կիրառարակվեն բավական ստվար հատորներով, երեք լեզվով, ինչն, անշուշտ, պետք է նաև գիտական աշխատանքների համար աղբյուր հանդիսանա: Դա թերևս, գիտահետազոտական կազմակերպությունների գործառույթ է, ոչ ԱՎԾ-ի:

**Գ. Կասպարյան**–Առաջարկում եմ ԳՀՀ աշխատանքներին ներգրավել ուսանողներին:

**Մ. Մինասյան** –Այս աշխատանքը որոշակի մասնագիտական ուղղվածություն ունի, թերևս ոչ բոլոր մասնագիտություններով ուսանողներին կարող ենք ընդգրկել, բացի այդ աշխատուժի զգալի մասը հաշվարարներ են, որոնց համար այլ բնակավայրում աշխատելու ծախսերի փոխհատուցում նախատեսված չէ նախահաշվով: Հաշվարարները պետք է ընտրվեն տեղերից, եթե լինեն այդպիսի ուսանողներ, նաև ուսումնառության գործընթացն չխանգարվի (ցանկալի է արտադրական փորձուսուցման ժամկետներն համապատասխանեցվեն ԳՀՀ-ի ժամկետներին), առաջարկությունն կարելի է ընդունել՝ այդ հարցում ակնկալելով ԲՈՒՀ-երի աջակցությունը:

**Ա. Գրիգորյան**- Ենթադրում եմ, որ ԳՀՀ-ը լայնածավալ աշխատանք է, ցանկալի է ունենալ աշխատանքների կատարման ժամանակացույց:

**Մ. Մինասյան**- Իրոք, շատ կարևոր է աշխատանքի ճիշտ կազմակերպումը, մանավանդ որ դրա համար նախատեսված է ընդամենը 20օր: ԱՀ ՎՊԽ գործընթացն կանոնակարգելու համար պետք է ընդունի շուրջ 5 տասնյակ որոշում, այդ թվում նաև ԳՀՀ նախապատրաստման ու անցկացման կազմակերպչական պլանները: Փաստաթուղթը հաստատվելուց հետո մենք անպայման դրանք կտրամադրենք պատկան մարմիններին:

**Գ. Մարտիրոսյան** – Սա ավելի շատ ոչ թե հարց է, այլ առաջարկություն: Ընթացքում ծագած հարցերն օպերատիվ արձագանքելու նպատակով կարելի է ստեղծել հանձնաժողովին կից աշխատանքային խմբեր՝ ներգրավելով բոլոր մարմիններից մեկական մարդ: Ենթադրում եմ խմբի աշխատանքները կղեկավարի ԱՀ ԱՎԾ նախագահը:



**ժ. Միրզոյան** – Գյուղնախարարությունը շահագրգռված է այս միջոցառումը բարձր մակարդակով անցկացնելու առումով, քանի որ չունենք հավաստի տվյալներ գյուղըլորտի բոլոր բնագավառներում, ուստի ակնկալում եմ բոլոր մարմինների աջակցությունը: Հավաստի տվյալները արդյունավետ ծրագրի գրավականն են:

**Հանձնարարվեց.**

1. ԳՀՀ համապետական հանձնաժողովի անդամներին 15-օրյա ժամկետում ներկայացնել առաջարկություններ ԱՀ–ում անցկացվելիք ԳՀՀ հարցաթերթերի վերաբերյալ:
2. Աշխատանքային խմբում ընդգրկման ենթակա իրենց կառույցների ներկայացուցիչների տվյալներն ներկայացնել ԱՀ ԱՎԾ:
3. Սույն փաստաթղթում նշված տվյալներն սահմանված ժամկետներում տրամադրել ԱՀ ԱՎԾ-ին:

**Որոշվեց.**

Հավանություն տալ «ԱՀ 2020 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման նախապատրաստման, անցկացման և նյութերի մշակման ծախսերի նախահաշվին»՝ որոշում N1 (կցվում է):

**Հանձնաժողովի նախագահ՝**

**ԱՀ պետական նախարար**

**Գ. Մարտիրոսյան**

**Հանձնաժողովի քարտուղար՝**

**ԱՀ ազգային վիճակագրական ծառայության  
աշխատակազմի հետազոտությունների և  
ուսումնասիրությունների բաժնի պետ**

**Լ. Սողոմոնյան**